

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ՆՈՐ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴՀԵՍ

Գեղեցիկ Արուեստները խրախուսող Թիֆլիսի ընկերութիւնը . Զինուորական թանգարանում բաց արաւ իւր պարբերական պարահանդէսը ամսոյս 14-ին: Հանդիսի բացումը անշուրք էր, ոչ սովորական մաղթանք, ոչ ճառախօսութիւն: Մի քանի տեղական նկարիչներ դիմաւորեցին փոքրաթիւ հիւրերին, առաջնորդելով նրանց դէպի թանգարանի երկթևանի շինութիւնը:

Իցոյց են գրուած աւելի քան 200 մեծադիր և փոքրադիր նկարներ և քսանի չափ անդրիագործական իրեր: Նկարների մէջ աչքի են ընկնում քանակութեամբ մեր հին ժանօթների պ. պ. Բաշինջաղեանի, Զօմների, Զախարովի, Յակոբեանի, Յօդելի և այլրց գործերը: Տիրապետում է պէյզաժը: Ժանրային նըկարներ շատ քիչ կան: Պատկերներ բաւականաչափ են, ընդհանուր առմամբ ներկայ պատկերահանդէսը գործում է իւր նախորդների տպաւորութիւնը, նոր բաներ գրեթէ չըկան: Այնուամենայիւ, հետնեալ անդամ կը յայտնենք մեր կարծիքը պատկերահանդէսի մասին որքան ես այն աղքատիկ լինի:

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՐԵՐ

ԱԴԱՄԱՆԴԻ ԳՈՅՑԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՌԱԴԻՎ ԱԶԴԵՑՈՒԹՆԱՄԻ: Արդէն յայտնի է, որ թանկագին քարերը, Բադդի ճառագայթների ազդեցութիւնից, փայլում են մթութեան մէջ, Բայց Բադդիի ազդեցութիւնը դորանով չէ բաւականանում: Ամառս պ. Վելիամ Կրուկսը այդ բանին վերաբերեալ շատ հետաքրքրական փաստեր ներկայացրեց Լոնդոնի կայսերական խորհրդի նիստին: Կրուկսը վերցրեց երկու աղամանդ Ա. Օ. գրան և Բ. Օ. օրու գրան ծանրութեամբ, համարեա թէ մինոյն մեծութեան և մինոյն բաց դեղին դոյնի ու հետևեալ փորձերը կա-

տարեց։ Ա. աղամանդը դրեց այնպիսի բանի մէջ, որտեղ նա բոլորովին ազատ էր՝ ապդիքի ազգեցութիւնից, իսկ Բ. աղամանդը պահեց որձաքարի խողովակի մէջ, որ պարունակում էր իր մէջ 15 միլիգրամ բարդիք։ Սրկու շաբաթից յետոյ Կրուկը համեմատեց երկու աղամանդները և ոչ մի զգալի փոփոխութիւն չդառաւ նրանց գոյնի մէջ։ Այն ժամանակ Բ. աղամանդը կրկն զետեղեց նոյն խողովակի մէջ և թողեց այդպէս վեց շարաթ։ Այդ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ նա տեսաւ, որ նրանց գոյները բաւական տարրեր էին, այսինքն՝ այն անդամանդը, որ ենթարկուել էր բարդիքի ազգեցութեան, աւելի մուգ գոյն էր ստացել։ Փորձը շարունակուեց 78 օր և այն հետեւանքն ունեցաւ, որ Ա. աղամանդը պահպանեց իր բաց զեղին գոյնը, իսկ Բ. աղամանդը աւելի մուգ դարձաւ և կապտականաչ գոյն ընդունեց։ Բորսկաթթւուտի և բլորային թթու աղի խառնուրդի մէջ 10 օր շարունակ տաքացնելուց յետոյ՝ (50° C.) Բ. աղամանդը կորցրեց մուգ գոյնը, ստացաւ կրկին իր առաջուայթափանցութիւնը, բայց պահպանեց կապտականաչ գոյնը։

Կրուկսի կարծիքով աղամանդի գոյնի փոփոխութիւնը բաղդիքի ազգեցութեամբ կարենոր նշանակութիւն ունի և բաւական հետաքրքրական երեսոյթ է վաճառականական տեսակէտից։

ՄԱՍՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ԱԲԻՒՆԻ. Ամերիկացի ֆիզիքագիտ Դասուկը մի շաբթ հետազօտութիւններ է կատարել, որոնք ցոյց են տալիս, որ մկանների աշխատանքի և արեան բազադրավեան մէջ սերտ կապ կայ։ Խնչպէս երեսում է, մկանների ուժեղ աշխատանքի ժամանակ, օրինակ լողանակիս, ձիռք արշաւելիս և այլն, արեան մէջ նկատում է որ արեան կարմիր գնդիկները սաստիկ շատանում են։ Մանաւանդ լողակիս, երբ այդ կարճ ժամանակ է տեսում։ Երկար լողանակիս՝ կարմիր գընդիկների թիւը քչանում է, բայց դորա փոխարէն շատանում են արեան մէջ գտնուող սպիտակ գնդիկները, որոնց թիւը կարող է 73% հասնել կարմիր գնդիկների շատանալը բացարձում է նրանով, որ մկանների ուժեղ աշխատութիւնը և արեան զօրեղացած լրջադարձութիւնը շարժողութեան են հնաթարկում կարմիր գնդիկներից նորանց, որոնք գտնուում են զանազան գործարաններում չեզոք գրութեան մէջ։ իսկ ինչ վերաբերում է սպիտակ գնդիկներին, նրանց շատանալը վերեր յիշուած օրինակի մէջ բացարձուում է ամենահասարակ կերպով։ այն է՝ նրանք հաւաքւում են լրջապատիք անօթիւների մէջ։ Պրոֆ. Գառուկի հետազօտութիւնների այդ հետեւանքը շատ կարենը նշանակութիւն ունի բժշկութեան տեսակէտից։ մանաւանդ այնպիսի հիւանդութեանց բժշկութեան ժամանակ, երբ հնարաւոր չի լինում գեղերի միջոցով բժշկել, օրինակ՝ արեանպակասութիւն։ Հատ կարելի է, որ այդ տեսակ հիւանդութիւններ աւելի հեշտ կլարել բժշկութեանց բժշկութեան ժամանակ, երբ հնարաւոր չի լինում գեղերի միջոցով բժշկել, օրինակ՝ արեանպակասութիւն։ Հատ կարելի է, որ այդ տեսակ հիւանդութիւններ աւելի հեշտ կլինի բժշկել, եթէ միայն բժշկները, բացի գեղով

բժշկելուց ստիպեն իրանց հիւանդներին մարմնամարզութեամբ
պարապեր

ԹՌՔԱԽԾԻ ԲԺՇԿՈՒՄԸ ԵԼԱՔՏՐԱԿԱՆՈՒԹԻԱՄԲ. Մի փոքր
առաջ, Լիօնի քիմիկոս Ֆրանցիսկ Կրօստոը հիմնեց Փարիզում
և Նկեքտրտկանութեամբ թոքախտներին բժշկելու ճեմարան։
Հիւանդներին բժշկում են շատ հեշտ միջոցով, բայց միևնույն ժա-
մանակ բժշկական օրէնքների համաձայն այսինքն աշխատում
են ելեքտրտկան խիստ հսուանքը մտցնել հիւանդների թոքերի
մէջ, որը ընդունակ է ոչնչացնել թոքախտի բարոր մանրէները։
Ելեքտրտկանութիւնն ստանում են այն մեծ ոյժի մեքենաներից,
որոնք շինուած են Կրօստի օրինակի նման։ Այդ մեքենաները
ընդունակ են ստատիկ ոյժ առաջացնել, որ անցնում է հիւանդ-
ների մարմնի միջով առանց նորանց փոքրիկ վնաս պատճա-
ռելու։

Այն բժիշկները, որոնք ներկայ են եղել հիւանդներին վե-
րոյիշեալ միջոցով բժշկելու ժամանակ, հաւատացնում են, որ
արդէն մի քանի փորձից յետոյ դոզը անցնում է և ախորժակը
բացուում. մանաւանդ չուտ են առողջանում երեխանները։

Առհասարակ այն յտջողութիւնները, որ ունեցել է Կրօստը,
շատ միսիթարական են։

Զի կարելի ի հարկէ մտածել, որ Կրօստի միջոցով կա-
րելի է բժշկել այնպիսի հիւանդներին, որոնք այլ ևս թոքեր
չունեն։

Վերոյիշեալ միջոցով, ինչպէս ասում են, պրօֆէսոր
Կրօստը յաջող կերպով բժշկում է ուրիշ հիւանդութիւններ էլ.
ինչպէս օրինակ՝ այքի հիւանդութիւնը։

ՃԱՂԱՏՈՒԹԵԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԻՆ. Ինչպէս հին ժամանակ.
ները անմահութեան աղրիւրներ էին որոնում, համարեա թէ
նոյն յամառութեամբ որոնում են այժմ մազեր աճեցնելու մի-
ջոցներ։

Վերջին ժամանակներս սկսել են ճաղատութիւնը լուսով
բժշկել և յաճախ բաւարար հետևանքներ են ստացեր Պրօֆ.
Կրօմայերը ճաղատութեան բուժման մի քանի փորձեր է կա-
տարել Բերլինում, ալսպէս կողուած՝ սառը երկաթէ լոյսով.
այնպիսի ելեքտրական լապտերների միջոցով, որոնց ելեքտրա-
սայրերը երկաթից են շինուած։ Այդ լոյսը զանազանում է
սովորական Վոլտովի կամարի ածուկսէ ելեքտրասայրերով լոյ-
սից նորանով, որ շատ քիչ քանակութեամբ է պարունակում
իր մէջ խորը թափանցող մուգ մանուշակագոյն ճառագայթներ
և այդպիսով նա ազդում է միմիայն վերնամաշկի վրայ։ «Երկաթէ»
լոյսը մի ուրիշ յատկութիւն էլ ունի, այն է որ նա տաք չէ,
որովհետեւ երկաթէ ելեքտրասայրերը միշտ սառցնում են սառը
ջրով։ Փորձի հն ենթարկուել այնպիսի Յ հիւանդներ, որոնք
ուրիշ ամեն միջոց գործ էին դրել և ոչ մի օգուտ չէին կտել։
Չնայելով որ այդ մարդկանցից երկուսը մի քանի տարի առաջ

էին ստացել իրանց հիւանդութիւնը, այնուամենայնիւ վեցն էլ բժշկուել են: Բժշկութիւնը կատարւում է հետեւեալ կերպով: առաջին օրը լոյսի ազդեցութեան է ենթարկուում միայն կաշուի մի մասը: Պամի կաշուի կէս մասը մօտաւորապէս տասը մասի են բաժանում և ամեն մի մասը առանձին առանձին գ բողէաչափ ենթարկուում են լոյսի ազդեցութեան: Միւս օրը լոյսի է ենթարկուում նոյն կերպով և զլիսի կաշուի միւս մասը: Արբորդ օրը լոյսի են ենթարկուում կաշուի այն մասերը, որոնք առաջին օրերը լաւ չեն լուսաւորուած եղել: Փորձից 2—3 օր յետոյ, լոյսից առաջացած կարմրութիւնը սկսում է թուլանալ: ամրող դործողութիւնը կրկնում է դարձեալ մէկ անդամ:

Միւնոյն փորձը 8—9 անգամ կրկնելուց յետոյ՝ թողնում են 1½—2 ամիս և թէ փորձերը յաջող են լինում կատարած, այդ ժամանակի ընթացքում կաշըն ծածկում է մազերով, հակառակ դէպրում գործողութիւնը կատարւում է դարձեալ մէկ անգամ: Պրօֆ Կրօմայերը ճաղատութիւնը լոյսով բժշկելը և յարմար և խսկական է համարում քան բոլոր ուրիշ միջոցները:

ԱՆԴԱՄԱՑԱՏԱԿԱՆ ՎԵՐՔԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ ԹԹՈՒԱԾԻ-ՆՈՎ, Վերջին ժամանակներս բելգիական անդամանատ պրօֆ. Տիրիարայի առաջարկութեամբ, սկսել են ամենահասարակ և ամենաատանինաս կերպով բժշկել վարակիչ վէրքերը և վարակիչ վիրարուժական հիւանդութիւնները թթուածինով: Թթուածնի ազդեցութիւնը նորա մէջն է, որ նա ազդում է այդ հիւանդութիւններ առաջ բերող մանրէների վրայ: Նոր լոյս տեսած «La technique operatoire et les indications générales de la méthode oxygénée»-ում, «ԱՕԲ.»-ի ասելով, պրօֆ. Տարիարը նկարադրում է այն պանչելի հետևանքները, որ ստացուել են անդամանատական բազմազան վէրքերը այդ միջոցով բժշկելուց: Վերքերի թթուածինով բժշկութեան ժամանակ, անհրաժեշտ է որ այդ գաղը շատ սեղմուած դրութեան մէջ լինի: Այդպէս սեղմուած գաղ ձեռք բերելը հեշտացաւ այն օրից, երբ սկսեցին ջուրը քիմիապէս վերլուծել: Ամեն զիսաւոր քաղաքներում ծախւում են զանազան մեծութեամբ մետաղէ բոմբեր, հաստ պատերով, որոնք պարունակում են իր մէջ թթուածինը շատ սեղմուած դրութեամբ: Այդ բոմբի հատ ձգախէժի խողովակով միանում է մէկ Պրաւացի սրսկիչի ասեղ: Այդ ասեղի միջոցով թթուածինը բարակ հոսանքով անց է կացւում վէրքեր մէջ: Վերոյիշեալ միջոցը լաւ արդիւնքներ է առել եղնգացացի, կտրուած, վիրաւորուած և խանձուած վէրքերի ու սիրիական ախտի բժշկման ժամանակ:

Կարմիր քամու ժամանակ հիւանդ տեղը ուրցնում են թթուածինով, որ կատարւում է 10—15 րոպէի ընթացքում անդամար խողովակը այս և այն կողմը տանելով, որպէս զի ամրող հիւանդ տեղերը ենթարկուեն թթուածնի ազդեցութեան: Այդ դործողութիւնները շատ հաճելի է լինում հիւանդ-

ներին, որովհնաւե այդ ժամանակ ցաւերը անհետանում են. Դողը և ինքը հիւանդութիւնը անցնում են առասարակ մէկ օրուայ ընթացքում:

Վերոյիշեալ եղանակով բաւական յաջող կերպով բժշկում են նաև լանջամաշկատապը և կանանց հիւանդութիւններ:

ՊԵՂՈՒՄՆԱՐ ԴԵԼՈՍ ԿՂՋՈՒ ՎԲԱԾ. Ֆրանսիացիների Դեկոս կղզու վրայ (Աթէնքում) կատարած պեղումները շարունակում են մինչև օրս մեծ յաջողութեամբ:

Օրէցօր ճշտում է Ապօղոն կղզուն տուած նոր Պօմպէյի անունը:

Պեղումներ են կատարուել մի մեծ փողոցում, որ միացնում է թատրոնը Դէլօսի նաւահանգստի հետ: Նորա երկու ափերին երևացել են մեծ տներ, որոնցից մէկը պահպանուել է մինչև այժմ:

Նորա ներքին գաւիթը զարդարուած է զարմանալի մօպիկով, որ ներկայացնում է թեատրո Դիոնիսին, ասիական զգեստով, բաղեղի պատկով և վազրի վրայ նստած:

Այդ տան պատերի վրայ պահպանուել են շենք որմնանկարների կտորներ:

Նոյն փողոցի վրայ գանուել է մի անյայտ նկարչի գրասենեակ, սախտակ մարմարիոնի կտորներ և մի տապանաքար շքեղ քանդակներով:

Ներկայում պեղումները շարունակում են հին Դեկոսի առջանքների պահեստի և մի ուրիշ տան շուրջը:

ՍՍԱԾՈՒՐՆՈՍԻ ՆՈՐ ՈՒՂԵԿԻՑԸ. Աստղաբաշխ Պիկկերինգի՝ մօտերս գտած՝ Սատուրնոսի նոր ուղեկիցը մեծ հետաքրքրութիւն առաջացրեց աստղաբաշխների մէջ, որոնք աշխատում են զտնազան աստղադիտանոցներում: Մի աստղաբաշխ հաւատացնում է, որ այդ ուղեկիցը շրջում է Սատուրնոսի շուրջը նրա բարձր ուրիշ ուղեկիցների և օղակի ընթացքի հակառակ կողմը:

Նթէ այդ ենթադրութիւնը ճշտուի, այն ժամանակ ստիպուած կիննենք ընդունել, որ Սատուրնոսի Ֆիրոս կոչուած նոր ուղեկիցը մի առանձին մարմին է և ոչ թէ գոյացել է Սատուրնոսից, ինչպէս ասում է դիտութիւնը առհասարակ մորակների համար:

Այս դէպքում ամենահաւանական ենթադրութիւնը կինի այն, որ Ֆիրոսը առաջ պատկանել էր ուրիշ մոլորակի. մի անգամ այնքան է մօտեցել Սատուրնոսին, որ վերջնիս ձգողոյժը աւելի մեծ է այն մոլորակի ձգող ոյժից, որին ինքը պատահանել է և Սատուրնոսը քաշել է նրան իր կողմը: